

Կենսաբազմազանության մշտադիտարկման արդյունքները

2. Կենդանական աշխարհ

Ընդհանուր առմամբ ֆաունան կարող է բնութագրվել որպես գիիու և կաղնու նոսր անտառային որոշ չոր տափաստանային տարրերով:

2.1 Անողնաշարներ

Ուսումնասիրությունները կազմակերպվել են գիտարշավների ձևաչափով՝ կիրառելով միջատաբանական հետազոտությունների համընդհանուր ընդունված մեթոդաբանությունը: Որպես ռեպրեզենտատիվ խմբեր ընտրվել են Coleoptera կարգի բզեզներն ու Lepidoptera-ի Rhopalocera ենթակարգի ցերեկային թիթեռները, որոնք դիտարկվել են որպես տարածքի կենսաբազմազանության գնահատման հիմնական ցուցանիշային խմբեր: Հետազոտությունները կատարվել են երթուղային եղանակով՝ ապահովելով տարածքի տարբեր կենսամիջավայրերի համարժեք ընդգրկում: Բզեզների տեսակային կազմի պարզաբանման նպատակով կիրառվել են միջատաբանական դասական մեթոդներ՝ ձեռքով հավաք բուսականությունից, հողի մակերեսից և քարերի տակից, ինչպես նաև հավաք ցանցի միջոցով (ներառյալ հնձման եղանակը) և բույսերից թափ տալով: Այս համալիր մոտեցումը հնարավորություն է տվել առավել ամբողջական պատկեր ստանալու ուսումնասիրվող միջավայրի տեսակային բազմազանության մասին:

Հետազոտվող տարածքի որոշ միջատների ֆաունայի կազմը

Աղյուսակ 3

NN	Միջատների տաքսոններ	Ծանոթություն
	1. Ընտանիք Գնայուկ բզեզներ - Carabidae	
1.	Carabus hollbergi	
2.	Calosoma inquisitor cupreum	

3.	<i>Acinopus laevigatus</i>	
4.	<i>Harpalus rufipes</i>	
5.	<i>Harpalus affinis</i>	
6.	<i>Pterostichus capitatus</i>	EA
7.	<i>Calathus ambiguus</i>	
8.	<i>Pristonychus gratus</i>	
9.	<i>Syntomus</i> sp.	
10.	<i>Lebya cyanocephala</i>	
11.	<i>Brachinus explodens</i>	
	2. Ընտանիք Լեշակերներ –Silphidae	
12.	<i>Silpha obscura</i> L.	
	3. Ընտանիք Staphylinidae	
13.	<i>Staphylinus</i> pr. <i>eurytus</i>	
14.	<i>Staphylinidae</i> sp.	
	4. Ընտանիք Histeridae	
15.	<i>Saprinus</i> sp.	
16.	<i>Hister quadrimaculatus</i>	
	5. Ընտանիք Glaphyridae	
17.	<i>Eulasia chrysopyga</i>	
	6. Ընտանիք Թերթիկաբեղավորներ – Scarabaeidae	
18.	<i>Blitopertha lineata</i>	
19.	<i>Oxythyrea cinctella</i>	
20.	<i>Cetonia aurata</i>	
21.	<i>Netocia caucasica</i>	
22.	<i>Netocia hungarica armeniaca</i>	
23.	<i>Netocia funebris</i>	
24.	<i>Epicometis seniculus</i>	
25.	<i>Valgus hemipterus</i>	
	7. Ընտանիք Չրիսկաններ –Elateridae	

26.	<i>Selatosomus latus</i>	
27.	<i>Cardiophorus nigratissimus</i>	
28.	<i>Cardiophorus socrates</i>	
	8. Ընտանիք Ոսկերզեզներ - Buprestidae	
29.	<i>Acmaeoderella gibbulosa</i>	
30.	<i>Acmaeoderella villosula</i>	
31.	<i>Capnodis tenebrionis</i>	
32.	<i>Sphenoptera tragacanthae</i>	

33.	<i>Sphenoptera hypocrita</i>	
34.	<i>Anthaxia muliebris</i>	
35.	<i>Anthaxia bicolor</i>	
36.	<i>Anthaxia Igockii</i>	
37.	<i>Anthaxia caucasica</i>	EC
38.	<i>Meliboeus robustus</i>	
39.	<i>Coroebus rubi</i>	
40.	<i>Coroebus elatus</i>	
41.	<i>Agrilus angustulus</i>	
	9. Ընտանիք Փափկամարմին բզեզեր – Cantharidae	
42.	<i>Cantharis melaspis</i>	
	10. Ընտանիք Մանրաբզեզներ - Melyridae	
43.	<i>Malachius semiaeneus</i>	
44.	<i>Malachius fucatus</i>	
45.	<i>Malachius</i> sp.	
	11. Ընտանիք Dasytidae	
46.	<i>Henicopus pilosus</i>	
	12. Ընտանիք Նեղամարմիններ - Oedemeridae	
47.	<i>Oedemera rostralis</i>	
48.	<i>Oedemera podagrariae</i>	
	13. Ընտանիք Խայտաբղետ բզեզներ - Cleridae	
49.	<i>Trichodes persicus</i>	EC
50.	<i>Trichodes 4-guttatus</i>	
	14. Ընտանիք Սևամարմիններ –Tenebrionidae	
51.	<i>Dailognatha caraboides</i> Sol.	
52.	<i>Tentyria tessellata</i>	
53.	<i>Blaps lethifera</i>	
54.	<i>Gonocephalum granulatum pusillum</i>	
55.	<i>Opatrum sabulosum</i>	
56.	<i>Nalassus faldermanni</i>	
57.	<i>Lagria hirta</i>	

58.	<i>Omophlus caucasicus</i>	
59.	<i>Omophlus</i> sp.	
60.	<i>Podonta elongata</i>	
	15. Ընտանիք Թարախահաններ - Meloidae	
61.	<i>Mylabris variabilis</i>	

62.	<i>Mylabris quadripunctata</i>	
63.	<i>Meloe variegatus</i>	
	16. Ընտանիք Phalacridae	
64.	<i>Olibrus bimaculatus</i>	
	17. Ընտանիք Mordellidae	
65.	Mordellidae sp. 1	
66.	Mordellidae sp. 2	
67.	Mordellidae sp. 3	
	18. Ընտանիք Փայլաբեզներ - Nitidulidae	
68.	<i>Meligethes</i> sp. 1	
69.	<i>Meligethes</i> sp. 2	
	19. Ընտանիք Կաշվեկերներ - Dermestidae	
70.	<i>Anthrenus pimpinellae</i>	
71.	<i>Attagenus bifasciatus</i>	
72.	<i>Attagenus</i> sp.	
	20. Ընտանիք Bostrychidae	
73.	<i>Scobicia chevrieri</i>	
	21. Ընտանիք Զատիկներ - Coccinellidae	
74.	<i>Hippodamia variegata</i>	
75.	<i>Bulaea lichatschovi</i>	
76.	<i>Coccinella septempunctata</i>	
77.	<i>Calvia</i> sp.	
78.	<i>Scymnus apetzi</i>	
79.	<i>Scymnus</i> sp.	
	22. Ընտանիք Երկարաբեղիկներ - Cerambycidae	
80.	<i>Stenocorus quercus</i>	
81.	<i>Pseudovadonia livida pecta</i>	
82.	<i>Brachyleptura tonsa</i>	
83.	<i>Leptura maculata</i>	
84.	<i>Echinocerus floralis</i>	
85.	<i>Xylotrechus ilamensis hadullai</i>	EC
86.	<i>Certallum ebulinum</i>	
87.	<i>Phytoecia coerulea</i>	
88.	<i>Phytoecia cylindrica</i>	

89.	<i>Agapanthia persicola</i>	
90.	<i>Agapanthia walteri</i>	
91.	<i>Agapanthia kirbyi</i>	

	23. Ընտանիք Տերևակերներ - Chrysomelidae	
92.	<i>Smaragdina limbata</i>	
93.	<i>Coptocephala unifasciata</i>	
94.	<i>Labidostomis propinqua</i>	
95.	<i>Clytra valerianae</i>	
96.	<i>Cryptocephalus concolor</i>	
97.	<i>Chrysolina herbacea</i>	
98.	<i>Entomoscelis sacra</i>	
99.	<i>Galeruca tanacetii</i>	
100.	<i>Pyrrhalta luteola</i>	
101.	<i>Alticinae</i> sp. 2	
102.	<i>Bruchinae</i> sp 1	
103.	<i>Bruchidae</i> sp. 2	
104.	<i>Spermophagus</i> sp.	
	24. Ընտանիք Urodonidae	
105.	<i>Bruchela suturalis</i>	
	25. Ընտանիք Attelbidae	
106.	<i>Attelabus nitens</i>	
	26. Ընտանիք Apionidae	
107.	<i>Apion</i> sp. 1	
108.	<i>Apion</i> sp. 2	
109.	<i>Apion</i> sp. 3	
	27. Ընտանիք Փղիկներ - Curculionidae	
110.	<i>Otiorrhynchus scopularis</i>	
111.	<i>Polydrusus inustus</i>	
112.	<i>Pholicodes trivialis</i>	
113.	<i>Ptochus circumcinctus</i>	
114.	<i>Sitona humeralis</i>	
115.	<i>Sitona</i> sp.	
116.	<i>Hypera</i> sp.	
117.	<i>Acentrus histrio</i>	
118.	<i>Hylobius verrucipennis</i>	
119.	<i>Smicronyx jungermanniae</i>	
120.	<i>Larinus onopordi</i>	
121.	<i>Larinus sturnus</i>	
122.	<i>Lixus cardui</i>	
123.	<i>Lixus furcatus</i>	EC

124.	<i>Cleonis piger</i>	
125.	<i>Coniocleonis nigrirostris</i>	
126.	<i>Tychius</i> sp.	
127.	<i>Curculio glandium</i>	
128.	<i>Baris timida</i>	
129.	<i>Baris scolopaceae</i> Germ.	
130.	<i>Ceutorrhynchus</i> sp. 1	
131.	<i>Ceutorrhynchus</i> sp. 2	
132.	<i>Gymnetron asellus</i>	
133.	<i>Cionus hortulanus</i>	
	Ցերեկային թիթեռներ – Lepidoptera: Rhopalocera	
	1. Ընտանիք Հաստագլուխներ - Hesperidae	
1.	<i>Thymelicus sylvestris</i>	
2.	<i>Hesperidae</i> sp.	
	2. Ընտանիք Արագաստաթիթեռներ - Papilionidae	
3.	<i>Papilio machaon</i>	
	3. Ընտանիք Ճերմակաթիթեռներ - Pieridae	
4.	<i>Leptidea sinapis</i>	
5.	<i>Aporia crataegi</i>	
6.	<i>Pieris pseudorapae</i>	
7.	<i>Colias crocea</i>	
	4. Ընտանիք Նիմֆալիդներ - Nymphalidae	
8.	<i>Vanessa cardui</i>	
9.	<i>Aglais urticae</i>	
10.	<i>Hipparchia parisatis</i>	
11.	<i>Maniola jurtina</i> .	
	5. Ընտանիք Կապտաթիթեռներ - Lycaenidae	
12.	<i>Cupido minimus</i>	
13.	<i>Lycaena phlaeas</i>	
14.	<i>Polyommatus icarus</i>	

* EA – Հայաստանի էնդեմիկ

* EC – Կովկասյան էկոտարածաշրջանի էնդեմիկ

Տարածքում չեն գրանցվել ՀՀ Կարմիր գրքում, Բեռնի կոնվենցիայի Հավելված 2-ում (Appendix 2 of Bern Convention) և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (IUCN Red List of Threatened Species) ընդգրկված անողնաշար կենդանիների որևէ խմբի պատկանող տեսակներ:

2.2 Ողնաշարավոր կենդանիներ

Ողնաշարավոր կենդանիների դիտարկումները կատարվել են երթուղային (մարշրուտային) եղանակով: Գրանցվել են բոլոր հանդիպած կենդանիները, որոնվել են նաև հետքերն ու բները:

2.2.1 Երկկենցաղներ – *Amphibia*

Հետազոտվող տարածքում չեն գրանցվել որևէ երկկենցաղներ, քանի որ թե տարածքում և թե նրա մոտակայքներում բացակայում են նրանց զարգացման համար համապատասխան գերիսոնավ էկոհամակարգերը:

2.2.2 Սողուններ – *Reptilia*

Սողուններից տարածքից գրանցվել են միայն *Darevskia raddei* ժայռային մողեսի եզակի առանձնայկներ: Տարածքին անմիջապես հարող լանջերից հայտնաբերվել է պղնձօձը – *Coronella austriaca*:

2.2.3 Թռչուններ – *Aves*

Հաշվի առնելով տարածքի փոքր չափերը և մոտակայքում գտնվող գործող հանքի անհանգստության գործոնը, թռչունների տեսակային կազմը խիստ սահմանափակ է: Բացի այդ, չի գրանցվել որևէ տեսակի բնադրման փաստ: Ընհանուր առմամբ գրանցվել է թռչունների 16 տեսակ.

1. Ժայռային ծիծեռնակ- *Ptyonoprogne rupestris*
2. Լեռնային ձիաթռչնակ-*Anthus spinoletta*
3. Սև մանգաղաթև- *Apus apus*
4. Սևախայտ քարաթռչնակ- *Oenanthe hispanica*
5. Անտառային աղավնի - *Columba palumbus*
6. Տնային ճնճղուկ- *Passer domesticus*
7. Սովորական կաշաղակ - *Pica pica*
8. Մոխրագույն ագռավ - *Corvus corone*
9. Սպիտակ խաղտոնիկ- *Motacilla alba*
10. Սովորական հողմավար բազե - *Falco tinnunculus*
11. Սովորական ճուռակ- *Buteo buteo*

12. Սևագլուխ դրախտապան- *Emberiza melanocephala* (նկ.1)
13. Սև կեռնեխ-Turdus merula (նկ.4)
14. Մեծ երաշտահավ - *Parus major* (նկ.2)
15. Անտառային կաշաղակ- *Garrulus glandarius*
16. Հոպոպ - *Upupa epops* (նկ. 3)

Սրացից մեծամասնությունը հանդիսանում են անտառային տեսակներ, որոշները կարող են օգտագործել տարածքը որպես կերհանդակ, վերջին երեքը՝ սինաթրոպ տեսակներ են:




Նկ.1



Նկ. 2



Նկ. 3



Նկ.4

2.2.4 Կաթնասուններ – *Mammalia*

Կաթնասուններից դիտարկվել է կրծողների 5 տեսակ՝ սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), Նազարովի դաշտամուկը (*Microtus nazarovi*), փոքր անտառային մուկը (*Sylvaemus uralensis*), անտառային մուկը (*Sylvaemus sylvaticus*) և ձյան դաշտամուկը (*Chionomys nivalis*): Բնորոշ տեսակներից տարածքում կարող են հանդիպել նաև թփուտային դաշտամուկը (*Microtus major*), մոխրագույն համստերը (*Cricetulus migratoris*), գետակի հարևանությամբ՝ ջրային դաշտամուկը (*Arvicola terrestrial*): Տարածքի գնահատման ժամանակ միջատակերներից դիտարկվել է փոքր խլուրդը (*Talpa levantis*):

Արշավների ընթացքում արձանագրված կաթնասունները պատկանում են ՀՀ տարածքում սովորական, լայնորեն տարածված, որոշ դեպքերում՝ ֆոնային տեսակներին:

Բացի այդ, գտնվել են շնագայլի (*Canis aureus*), փորսուղի (*Meles meles*) և կզաքիսի (*Martes foina*) հետքեր (կեղտը):

Ողնաշարավոր կենդանիներից հատուկ պահպանվող՝ ՀՀ Կարմիր գրքում, Բեռնի կոնվենցիայի Հավելված 2-ում (Appendix 2 of Bern Convention) և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (IUCN Red List of Threatened Species) գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

Վերհանված տվյալների ամփոփմամբ կարելի է արձանագրել, որ ուսումնասիրվող տարածքի ֆաունան բնորոշ է Հարավային Հայաստանի միջինլեռնային նոսրանտառային և բաց լանդշաֆտներին: Այն որևէ առանձնահատուկ տարբերակիչ առանձնահատկություն չի դրսևորում՝ համեմատած տարածաշրջանի համանման լանդշաֆտների հետ: Ուսումնասիրվող տարածքում չեն հայտնաբերվել Հայաստանի Կարմիր գրքում գրանցված անողնաշար և ողնաշարավոր կենդանատեսակներ:

